ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՁՈՐԱԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

23.02.2018թ

N 38

ՀՀ Լոռու մարզպետ

պարոն Ա. Նալբանդյանին

Կից ներկայացնում ենք Ձորագյուղ համայնքի ղեկավարի 15.02.2018 թ-ի թիվ 06-Ա և 22.02.2018թ-ի 07-Ա որոշումները:

Առդիր՝ 2 էջ:

Համայնքի ղեկավար՝ Ս. Հարությունյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՁՈՐԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

15 .02. 2018 թ. N 06-Ա

# ՈՐՈՇՈՒՄ

## ԱՐՇԱԿՈՒՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.10396 ՀԱ 06-066-0103-0043 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԵՐԸ, ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 18 մայիսի 2006 թվականի »Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին« թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի, հաշվի առնելով Արշակունի Հովհաննիսյանի համաձայնությունը՝ գնման նախապատվության իրավունքով գնելու, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագյուղ համայնքի համայնքային սեփականություն ճանաչված, Նոր խճուղի 1-ին փակուղի թիվ 1/1 փոստային հասցեով 06-066-0103-0043 ծածկագրով 0.10396 հա, հողամասը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագյուղ համայնքի համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված՝ /անշարժ գույքի գրանցման թիվ 22012018-06-0056 վկայական/ այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտի իրավունք չառաջացնող, Արշակունի Հովհաննիսյանի կողմից ՀՀ Լոռու մարզի Ձորագյուղ համայնքի Նոր խճուղի 1-ին փակուղի թիվ 1/1 փոստային հասցեով 06-066-0103-0043 ծածկագրով 0.10396 հա, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող, հողամասը կադաստրային արժեքով՝ 149703 ՀՀ դրամով, յուրաքանչյուր 1 քմ 144 ՀՀ դրամով և արտաքին չափերով ինքնակամ կառուցված 06-066-0103-0043-001 ծածկագրով արտաքին չափերով՝ 532.603 քմ մակերեսով անասնաշենքը՝ 468690.64 ՀՀ դրամ, 06-066-0103-0043-001 ծածկագրով արտաքին չափերով՝ 111.456 քմ մակերեսով տնտեսական շինությունը՝ 98081.28 ՀՀ դրամ, 06-066-0103-0043-003 ծածկագրով արտաքին չափերով՝ 51.5171քմ մակերեսով անասնաշենքը՝ 45335.048 ՀՀ դրամ, ընդանուր 695.5761 քմ արտաքին մակերեսով անասնաշենքը և տնտեսական շինությունը 612107 ՀՀ դրամով: Ընդամենը՝ 761810 ՀՀ դրամ դրամ արժեքով գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով օտարել Արշակունի Հովհաննիսյանին:

2. Պարտավորեցնել Արշակունի Հովհաննիսյանին 30-օրյա ժամկետում համայնքի ֆոնդային հաշվին վճարել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի օտարման արժեքը և կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՁՈՐԱԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 07 - Ա

« 22 » փետրվարի 2018թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳՅՈՒՂԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-066-0015-0034 ԾԱԾԿԱԳՐԻ ՝ ԳՈՒՐԳԵՆ ԴԱՎԹԻ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՃՇՏՎԱԾ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2005 թ-ի թիվ 2387 - Ն որոշմամբ, հիմք ընդունելով Շողիկ Գևորգի Վարդանյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Ձորագյուղի կադաստրային քարտեզի 06-066-0015-0034 ծածկագրի՝ Գուրգեն Սիմոնյանին պատկանող բնակելի տան համար հաստատել հետևյալ ճշտված փոստային հասցեն՝ Գ. Ձորագյուղ 3-րդ փողոց, 3-րդ փակուղի , տուն 6:

Համայնքի ղեկավար Ս. Հարությունյան